ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

<< ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ/2024/L-49>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Ք.Երևան **«27». 05. 2024թ.**
Ժամը 12:00

ՕՐԱԿԱՐԳ.

ՀՀ ՆԳ նախարարության կարիքների համար **ջերմային տպիչների** ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ/2024/L-49** ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ/2024/L-49 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից **«Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի** կողմից ներկայացրած հայտերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հայտում հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրում առաջարկվող ապրանքի նկարագրում նշված չեն ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը և համապատասխան առաջարկվող տեխնիկական բնութագիրը:

Մասնակցին տրվել է 1 /մեկ/ աշխատանքային օր անհամապատասխանությունների շտկում կատարելու համար:

«Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները շտկվել են:

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՏՊԻՉ/2024/L-49 ծածկագրով ընթացակարգին ընտրված մասնակից է ճանաչվել **1-ին չափաբաժնով՝ «Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊԸ**-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից **մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը**:

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում **«Ի Ջի Էլեկտրոնիքս» ՍՊ Ընկերությանը** կառաջարկվի կնքել **ջերմային տպիչների ձեռքբերման** գնման պայմանագիր:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝
ՀՀ ՆԳՆ ՏՏևԿՎ պետի տեղակալ Ա. Թամազյան
Հանձնաժողովի անդամներ՝
ՀՀ ՆԳՆ ՏՏևԿՎ ՏՀՍ բաժնի գլխավոր մասնագետ Մ. Բաբայան

ՀՀ ՆԳՆ ՏՏևԿՎ ՏՀՍ բաժնի գլխավոր մասնագետ Շ. Հարությունյան
Քարտուղար՝
ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Սահակյան